

բօնական իշխանութիւնը ինքն համակրութեամբ վերաբերուէր հոգևոր դպրոցների դասատուների վաստակին և ըստ արժանւոյն գնահատէր. այն ժամանակ միայն կարելի էր սպասել արդարացի վերաբերմունք ուրիշների կողմից: Ժամանակ է վերջ գնել կեղծաւոր հառաչանքների և խօսքերին, թէ հոգևոր դպրոցի դասատուները պէտք է ճգնաւորներ լինին, որովհետև այդ նշանակում է ուրիշի ուսերին ծանր բեռներ գնել, որը այդ հառաչանք արձակողները մատով անգամ չեն ուզում շարժել:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵՍ.Ն ՕՐԹՈԳՌՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ

Կ. Պօլսոյ յունաց պատրիարք Յովակիմ Գ. և Սինոդը գլխել են միտրօպօլիտներին շրջաբերական թղթով թուրքիայում քրիստոնեաների զինուորական ծառայութեան վերաբերութեամբ, որը վճռել է թուրքական պարլամենտը: Թուղթը բացատրում է, թէ տիեզերական պատրիարքարանի հօտը ինչպէս պէտք է վերաբերուի պետական նոր օրէնքին: Թուղթը վկայում է, որ յոյն ժողովուրդը, միւսների հետ միասին միշտ պատրաստ է աշխատել ընդհանուր հայրենիքի յաջողութեան և բարգաւաճման համար, ուրախութեամբ ընդունում է զինուորական ծառայութեան մասին օրէնքը, մանաւանդ որ, խուսափումն այս օրէնքը կատարելուց կամ՝ ընդդիմութիւնը չի համապատասխանում յոյների ազգային շահերին: Յոյների, որոնք կայսրութեան միւս ժողովուրդների համեմատութեամբ ի հարկէ, ոչ վատ են և ոչ ցած, այլ միւսների հետ հաւասար ընդունակ են սահմանադրական քաղաքացիների պարտքերը կատարել: Բայց, որովհետև այլակրօնութիւնը կարող է առաջ բերել զանազան թիւրիմացութիւններ և վտանգներ քրիստոնեաների կողմից, որոնք կոչւում են ի ծառայութիւն մահմետական պետութեան զօրքի մէջ, պատրիարքարանը շտապում է իւր կողմից անհրաժեշտ միջոցները ձեռք առնել այս կարևոր գործում, երկիւղի ամենայն կասկած հեռացնելու համար:

Ի մասնաւորի, պատրիարքարանը կառավարութիւնից

պէտք է պահանջի մահմեդական զօրքի մէջ քրիստոնեաների մի քանի իրաւունքները երաշխաւորել: Ամենից առաջ, զինուորական ծառայութեան ժամանակ և քրիստոնեաների՝ թուրքական դրօշակի տակ գտնուելիս՝ պէտք է արգելուի մի դաւանութիւնից միւսն անցնելը: Այնուհետև քրիստոնեայ զինուորները պէտք է ունենան իրանց քահանաները, որոնք պէտք է ուսուցանեն նրանց կատարել իրանց կրօնական պարտաւորութիւնները: Քրիստոնեայ զինուորները պէտք է ունենան իրանց եկեղեցիներ, կամ յատուկ նշանակութեամբ տեղ, ուր սրօշեալ ժամերին կարող լինեն խմբուել, ինչպէս այս անուամբ են մահմեդականները: Քրիստոնեայ զինուորները պէտք է պահեն տօները, պասերը և քրիստոնէական կրօնի միւս կարգերը: Ծառայութիւնը դիւրացնելու համար անհրաժեշտ կը լինէր քրիստոնեայ զինուորներից առանձին զնդեր կազմել: Վերջապէս, հենց այժմ՝ թուրքաց կառավարութիւնը պէտք է կարգադրութիւն անի զինուորական դպրոցներում՝ քրիստոնեաներ ընդունելու մասին, որ նրանք յետոյ կարողանան թուրքական զօրքերում իբրև սպաներ էլ ծառայեն: Այս բոլորի մասին պատրիարքարանը միջնորդութիւն է յարուցանում թիւրք կառավարութեան առաջ, իսկ առ այժմ՝ իւր թղթով եռանդագին յանձնարարում է, որ քրիստոնեաները յօժարակամ՝ պատրաստուեն զինուորական ծառայութիւն կատարել, այս բանում միւս ժողովուրդներից յետ չըմնան, չը խուսափեն զինուորութիւնից փող վճարելով, և մանաւանդ փախուստ չը տան իրանց ծննդավայրից, որովհետև հայրենասիրութիւնը և սէրը դէպի բնագաւառը պարտաւորում են նրանց անձամբ կատարել ծառայութիւնը թուրքական զօրքերում, որը քրիստոնեաներին հաւատարեցնում է մահմեդականների հետ:

Մէջ բերելով պատրիարքական և սինօգական թուղթեր, Կ. Պօլսոյ պատրիարքարանի պաշտօնական «եկեղեցական ձշմարտութիւն» օրագիրը բացատրում է հիմնաւոր և արդարացի լինելը այդ պահանջների, որոնք պատրիարքարանից ուղղւում են թուրքաց կառավարութեանը, զի-

նուորական ծառայութեան նոր օրէնքի պատճառով, Այսպէս, քրիստոնեայի համար նրանց զինուորութեան ժամանակ խզճի ազատութիւն պահանջելը կապ ունի յայտնի սխտածով կրօնական պրօպագանդի հետ, որ Թուրքիայում կիրառութեան մէջ է արսօլիւտիզմի տիրապետութեան ժամանակ:

Այստեղ կար առանձին «արեան հարկ» կամ «որդիներով տուրք», որ սարսափելի հարուած էր հասցնում քրիստոնեաների կրօնական և բարոյական ինքնագիտակցութեանը, որովհետև քրիստոնեայ ընտանիքներից խլուում էին բոլոր տասն տարեկան առողջ և գեղեցիկ պատանիները, բռնութեամբ դարձնում էին մահմեդական և պարտաւորում էին վարել տէրութեան զինուորական ծառայութիւնը: Ճշմարիտ է, այժմ զօրքի մէջ չափահաս քրիստոնեաներ կը լինին, բայց հաւատափոխութեան ճանապարհներն ու միջօցները շատ շատ են, և այս դէպքում քրիստոնեայ զինուորներին անյարմար կը լինի պահել խզճի ազատութիւնը մահմեդականների, ամենքին յայտնի խտատորտութեան և մոլեռանգութեան պատճառով: Այդ պատճառով էլ անխուսափելի զինուորական ծառայութեան ժամանակ հաւատորսութեան հաստատուն և վճռական արգելքը պէտք է լինի ամենայարմար կարգադրութիւնը: Այնուհետև զօրքը ընդհանրապէս պէտք է կոչուի «Օսմանեան» և հաւատար կերպով պէտք է ապահովուի թէ քրիստոնեաների և թէ մահմեդականների իրաւունքը ազատօրէն կատարելու իրանց կրօնական պարտականութիւնները: Քրիստոնեայ զինուորների յարմարութեան համար պէտք է զօրքերում քրիստոնեայ քահանաներ ունենալ, ազօթաւաներ սարքել, բայց աւելի լաւ կը լինէր քրիստոնեաներից առանձին վաշտեր կամ գնդեր կազմել, որոնք կրէին ծառայութիւնը առանց իրանց կրօնական պարտաւորութիւնը զանցառութեան տալու: Հակառակ դէպքում, օրինակ, ռամազանի օրերում, երբ մահմեդականները միայն գիշերն են ուտում ու խմում, քրիստոնեաները ծանր դրութեան մէջ կը լինեն, իսկ միւս կողմից էլ,

նրանք մահմեդականների հետ միասին մի գնդի մէջ լինելով, զրկուած կը լինեն քրիստոնէական տօներն ու պատերը պահելու հնարաւորութիւնից: Այն, կառավարութիւնն էլ պարտաւոր է քրիստոնեայ զինւորների հետ այնպէս ուղղամտութեամբ վարուել ինչպէս մահմեդականների հետ է վարուում: Սահմանադրական կարգերին անպատշաճ կը լինի, եթէ, օրինակի համար, Սալոնիկի միլայեթի մահմեդականները նշանակուին տեղական զօրքերում ծառայելու, իսկ քրիստոնեաներին ուղարկեն հեռաւոր քաղաքներ և տեղեր — էրզերում կամ Բաղդատ նոյնպէս և եմէն կամ Աֆրիկայի Տրիպոլի, նոյնպէս էլ պէտք է քրիստոնեայ սպաներին մահմեդականներին հաւասար իրաւունք տալ, որ այստեղ էլ կողմնապահութիւն չը լինի դէպի մի կողմը, և պարբերական նուաստացումն՝ դէպի միւս կողմը և ինչ Տիեզերական պատրիարքարանը զինուորագրութեան վերաբերութեամբ դիմելով յոյն ժողովրդին շրջաբերական թղթով, ցանկութիւն ունի միայն օգնութիւն ցոյց տալ կառավարութեանը, նրան հասնելու իւր նպատակին, որը առաջ է բերել սահմանադրութիւնը ընդհանուրի հայրենիքի օգտին: Այս է իսկական պարտքը պատրիարքարանի, որը Թուրքաց Սուլթան Մահմեդ Բ. Յաղթողի օրից սկսած մինչև վերջին ժամանակները ճանաչուած է և է ոչ միայն կրօնական այլ և քաղաքական կենդան բոլոր հստում ժողովրդի, նրա ներկայացուցիչը բարձրագոյն Դրան առաջ և պարտաւոր է հետևել կատարելու իւր ժողովրդի կողմից իւր վերայ դրուած քաղաքական պարտաւորութիւնները: Սակայն, չը նայելով տիեզերական պատրիարքարանի այս կարևոր դէպքում, ըստ ամենայնի օրինական գործողութեան, թիւրք կառավարութիւնը փոխանակ պատրիարքարանի հետ միասին աշխատելու կարգաւորել քրիստոնեաների զինուորագրութեան գործը տէրութեան հպատակների օգտին, որ անկեղծութեամբ ցոյց են տալիս պատրիարքն ու Սինօքը, սրանց հետ ապարդիւն հակաճառութեան մէջ է մտել և սկսել է վիճելի համարել պատրիարքի իրաւունքը և կարգադրութիւնը քրիստոնեաների

զինւորակոչի վերաբերութեամբ: Նշանակուած է, մասնաւոր գործին տրուած է սկզբունքային նշանակութիւն և նորից հերթական է դարձել տիեզերական պատրիարքի դարաւոր իրաւունքի ու արտօնութիւնների հարցը: Ինչ կերպարանք կատանայ այս սկզբունքային վէճը, — այդ ցոյց կտայ մերձաւոր ապագան:

— Երուսաղէմում փակուել է Խաչի աստուածաբանական դպրոցը, որ երեք տարի առաջ տօնեց իւր դոյութեան յիսնամեակը և անցեալումն ցոյց տուած իւր մեծ ծառայութիւնը յոյն-արեւելեան եկեղեցուն: Պաղեստինի միակ դպրոցական այս հաստատութեան փակուելու պատճառն է Երուսաղէմի պատրիարքարանի անկարգութիւնն ու Սուրբ գերեզմանի միաբանութեան անտեսական անձկութիւնը: Յայտնի է, որ Երուսաղէմի պատրիարք Դամիանոսի և Սուրբ գերեզմանի միաբանութեան միջև տիրում է սաստիկ տարաձայնութիւն եկեղեցական ներքին քաղաքականութեան մի քանի հարցերի վերաբերութեամբ, որին հետեւեց պատրիարքի բռնի գահընկէցութիւնը. գոհութիւն Աստուծոյ, — Երուսաղէմի պատրիարքական տագնապը անցաւ, և երանելի Դամիանոսի ու Սուրբ գերեզմանի միաբանութեան մէջ վերահաստատուեց խաղաղութիւնը: Բայց տազնապի հետեւանքները այժմ էլ զգալի են մի քանի պարագաներում և առաջ են բերում շատ անախորժ բարդութիւններ տեղական եկեղեցական կեանքում: Խաչի աստուածաբանական դպրոցի փակումն է մէկը այն, ոչ ցանկալի, հետեւանքներից: Բանն այն է, որ սեմինարիայի վերատեսուչ Խրիստոսով Պապադօպուլ վարդապետը իբրև Դամիանոս պատրիարքի հակառակորդ հարկադրուեց թողնել դպրոցն ու Երուսաղէմից Կ. Պօլիս գնալ: Իսկ նա դպրոցի հօդին էր, դրա համար էլ նրա բռնի հեռացումից յետոյ դպրոցական գործերը սկսեցին հետզհետէ քայքայուել: Անշուշտ, պատրիարքարանում տեղի ունեցող մաքառումները ազդել են դպրոցում սովորող պատանիների վերայ, որոնք ի դէպ, շատ համակրում էին իրանց վերատեսչին՝ ինչպէս այս երևում է

ուսանողների Խորհուստով՝ վարդապետին դրած նամակից, որ տպուած է Աղէքսանդրիայի «Պանտեն» օրագրում: Այնուհետև դպրոցի համար նոր ուժով նոր կերպարանք ստացաւ դրամական հին հարցը. դպրոցի պահպանութեան միջոցները պակասութիւնը, որովհետև պատրիարքարանում տնտեսական գործերում սկսուեց մեծ անկարգութիւն մանաւանդ տնտեսական կառավարիչ Եւթեմիոսի Երուսաղէմից հեռանալուց յետոյ: Բաց յայսմանէ, պատրիարքարանը այժմ՝ զբաղուած է արաբական հարցը վճռելու խնդրով, որ առաջ է եկել Պաղեստինի ուղղափառ արաբների պահանջներով, որոնք կամենում էին մասնակից լինել տեղական եկեղեցական կեանքին: Յիշեալ պայմանների ազդեցութեամբ Դամիանոս պատրիարքը և Սուրբ Սինոդը այս ուսումնական տարուայ սկզբին զբաղուեցին քննելով խնդիրը, թէ պէտք է Խաչի աստուածաբանական դպրոցը լինի թէ ոչ:

Դպրոցի համար անբարեյաջող պայմանները այնքան զօրեղ էին, որ Երուսաղէմի Սինոդը միաձայն վճռել է փակել դպրոցը մինչև Պաղեստինի եկեղեցական ներքին գործերը կը բարւոքուեն: Խաչի Աստուածաբանական դպրոցի փակման լուրը Արևելքում ամեն տեղ ապշեցուցիչ տպաւորութիւն թողեց: Ակամայ ջերմ և անկեղծ իզձ է յայտնուում, որ ինչքան հնար է, այդ դպրոցի համար լաւ ժամանակ հասնէր, որ նա նորից կարողանար սիրով բանալ իւր դռները աստուածաբանական գիտութիւններին ծարաւի պատանիների համար:

— Դամասկոսում, տեղական ուղղափառ պատրիարքարանում հրատարակուում է նոր եկեղեցական—աստուածաբանական օրագիր «Ճնորհք», որ հիմնել է Անտիոքի պատրիարք Երանելին Գրիգոր Գ. Ա. յդ հրատարակութեան համար վաղուց էր պատրաստութիւն տեսնուում. միայն անցնող տարուայ յունիսի 15-ից Գրիգոր պատրիարքը, վերջապէս, կարողացաւ իրագործել իւր ցանկութիւնը: Օրագիրը հրատարակուում է արաբերէն և ունի բաւական ընդարձակ ծրագիր: Նրա մէջ հրատարակուում են ընդ-

հանուր աստուածաբանական և եկեղեցական-պատմական մանկավարժական և գիտական յօդուածներ, Սիրիայի և Արևելեան ուղղափառ ուրիշ երկրների եկեղեցական կեանքի մասին տեսութիւններ, արաբական հին գրողների աստուածաբանական նիւթերի մասին շարադրութիւններ, որ գտնուում են տեղական մատենադարանների ձեռագրերում, և ինչ Օրագիրը հրատարակելու համար Գրիգոր պատրիարքը առանձին տպարան է սարքել, որ շատ թանգ է նստել: Այս տպարանում ուրիշ, կրօնական-բարոյական բովանդակութեամբ, գրքեր էլ պէտք է հրատարակուեն Սիրիայի ուղղափառ բնակիչների համար: Ընդհանրապէս, Սիրիացիների հոգևոր կրթութեան համար այժմ մեծ ուշադրութիւն են դարձնում ինչպէս Գրիգոր պատրիարքը նոյնպէս և Անտիոքի եկեղեցու Միտրոպօլիտները. և եկեղեցական-հրատարակչական, նոյնպէս և դպրոցական գործունէութիւնը Սիրիայում վերջին ժամանակներս ստացել են նոր ուղղութիւն, հեաղհետէ ընդարձակուում են ու ժողովրդի կարիքներին համապատասխան ընթացք ստանում:

— Թուրքիայում ալբանական ժողովրդի մէջ առաջ է եկել Կոստանդնուպօլսի յոյն պատրիարքարանից անկախ ազգային եկեղեցի ունենալու շարժումն:

Այս նպատակին հասնելու համար Օրթոդոքս ալբանացիները դիմել են Կ. Պօլսոյ յոյն պատրիարքարանին և խնդրել, որ պատրիարքարանը ալբանական եկեղեցին օժտի ինքնավար ազատութեամբ, ընդունի տեղական հոգևորականութեան անկախութիւնը, իրաւունք տայ աստուածպաշտութիւնն ու քարոզները կատարել ալբաներէն և ինչ Կ. Պօլսոյ յոյն սրբ. Սինոդը քանիցս քննութեան նիւթ է դարձրել ալբանացիների պահանջները, բայց որոշումն դեռ չէ եղել: Ինչպէս երևում է ալբանացուց եկեղեցական խնդիրը մեծ դժուարութիւններ պէտք է առաջ բերի յոյն պատրիարքարանում և կը ծանրանայ, առանց այս էլ նրա ծանր դրութիւնը, որ առաջ է եկել

Թուրք կառավարութեան անբարեացակամ վերաբերմունքից դէպի իւր բազմակրօն հպատակների եկեղեցական վարչութիւնները: Այժմեան սահմանադրական Թուրքիայում բնականաբար պէտք է առաջ գար Ալբանացիների ազգային կրթական շարժումն, կիսակիրթ ուլբանացիք հանդիպելով եւրոպական քաղաքակրթութեանը կամ պէտք է իւրացնէին այդ քաղաքակրթութիւնը և վերակենդանանային կամ պէտք է ձուլուէին շրջապատող քաղաքակիրթ ժողովուրդների հետ: Ալբան մտաւորականները ըմբռնեցին ժամանակի կարիքը, և ընտրեցին առաջին ճանապարհը, այն է քաղաքակրթուել ազգային հոգևով և ուղղութեամբ, որպէս զի լուսաւորութեան միջոցով կարողանան ձեռք բերել ազգային ինքնուրոյնութիւն Թուրքիայի բազմազան ժողովուրդների մէջ: Ազգային սթափումն երևում է ալբանացիների, վերջին ժամանակներս կազմած բազմաթիւ ժողովներից, կազմակերպութիւններից, որոնք ապացուցանում են նպատակայարմար և կուլտուրական վերածնութիւնը: Ալբանացիները անկախ եկեղեցի ունենալու համար պէտք է չը հեռանան բողոքարններից, այլ պէտք է առաջնորդուեն հիմք ունենալով օրինականութիւնը: Եւ յոյն պատրիարքարանն էլ, ներքին անկախութեան ձգտող ազգի եկեղեցու հետ հոգևոր կապը պահպանելու համար պէտք է յարգի իրաւացի պահանջը:

— Թրակիայի և Մակեդոնիայի բոլգար ժողովրդի մէջ զօրեղ կերպով տարածւում է կաթոլիկութիւնը, կաթոլիկ բազմաթիւ միսիօններների ձեռքով: Աւելի շատ են կաթոլիկութիւն ընդունողները Հերակլի և Ադրիանուպօլսի թեմերում, ուր կաթոլիկները վայելում են պապի՝ Կ. Պօլսում եղող ներկայացուցչի բարձր հովանաւորութիւնը: Բոլոր գիւղերում ունեն լաւ եկեղեցիներ և դպրոցներ, բաւականաչափ հոգևորականներ, որոնք ապահովում են տարեկան ոսծիկներով: Լազարիստների կարգին պատկանող մակեդոնական հոգևորականութեան գլխաւոր արքատ Լազօն, պարծենում է, որ կաթոլիկ քարոզչութիւնը նշա-

նաև որ յաջողութիւն է ունենում օրթոդոքս բողոքականների մէջ: Քարողչութիւնը գործում է յատկապէս դպրոցների միջոցով: Կաթոլիկ հոգևորականները խօստովանութիւնն էլ գործ են դնում որպէս զէնք հաւատարմութեան: Գործը հեշտանում է բողոքականների ազիտութեամբ: Տղէտ բողոքականները չեն ջոկում լատին քահանային օրթոդոքս քահանայից. օրթոդոքս և լատին դաւանութիւնների զանազանութիւնը չեն ըմբռնում և կուրօքէն հետեւում են ինքնակոչ հաւատարմներին, իրանց իսկական հովիւների կողմից պաշտպանութիւն չը տեսնելով: Արքատ Լազոն, ի դէպ, խօստովանում է, որ ռամիկ բողոքար ժողովրդի մէջ քարողչութիւնը դժուարութեան է հանդիպում. քարողիչները յետ ընկած փոքրիկ գիւղերում, պաս օրերին պարտաւորում են բողոքականների պէս ապրել, նստել, քնել և ուտել յատակի վերայ, պասերը պահել և չնա եթէ Լազարիաների քարողչութեան յաջողութիւնը չափազանցրած էլ լինի, այնուամենայնի երևում է, որ Բողոքարիայում եկեղեցու դրութիւնը աննախանձելի է, և պահանջում է տեղական հովիւների եռանդուն հսկողութիւնը ժողովրդի հոգևոր կեանքի և լատին քարողիչների շրջագայութեան վերայ:

— Աւստրո — Ունգարիայի սահմանում, Խօրվատիայի Սերբական դպրոցներում արգելուած է կիրիլլեան տառերով գրքերի գործածութիւնը: Սերբական դպրոցական խորհուրդը, որ ինքնավարութեան իրաւունք ունի, այս կարգադրութեան դէմ բողոք է յարուցել և ուղարկել է բողոքը Խօրվատիայի Սէյմին:

— Ուգորեան-Ռուսում, վաղուց արդէն գոյութիւն ունեցող Մաջար դասալիքների ընկերութիւնը նպատակ է դրել Ուգոր-Ռուս եկեղեցում աստուածպաշտութիւնը մաշաւտերէն կատարել, այն պատրուակով, թէ Ուգոր-Ռուսները չեն հասկանում եկեղեցական-սլաւեան լեզուն: Այս մասին ընկերութիւնը գիմել է Հռովմայ պապին, որը առայժմ պատգամաւորներին չէ ընդունել որպէս ներկայացուցիչ ամբողջ Ուգոր-Ռուս ժողովրդի և նրա ինդրին բա-

ւականութիւն չէ տուել: Սակայն ուրս ժողովրդի թշնամիները շարունակում են իրանց կռիւը սլաւոնական աստուածապաշտութեան դէմ, իսկ մի քանի քահանաներ էլ քարոզները արդէն մաջառերէն են ասում: Շատ ժամանակ չէ, որ կաթոլիկ Բուսների մի քանի գիւղերում յօգուտ պրաւօսլաւիայի շարժում սկսուեց, բայց մաջառ կառավարութիւնը ճնշեց նրան: Իսկ կաթոլիկ եպ'սկոպոսները անարգել ներմուծեցին երկրում լատին օրացոյցը:

— Աթէնքում բացուեց յոյն եկեղեցու Սրբ. Սինօզի նոր շրջանը:

Սինօզի նախագահն է Աթէնքի միտրօպօլիտը. չորս եպիսկոպոսներ անգամ են նշանակուած և մի պաշտօնեայ էլ պետութեան ներկայացուցիչ:

Թուրքիայում մինչև սահմանադրութեան հաստատուելը հպատակ ազգերը հարստահարում էին և ենթակայ էին ամեն տեսակ բռնութեան, սակայն պատրիարքների իրաւանց սահմանափակութեան մասին խօսք չկար: Նրանք գոնէ անուանապէս վայելում էին այն բոլոր արտօնութիւնները, որոնք վաւերացած և հաստատուած էին նախկին սուլթանների ֆիրմաններով: Սահմանադրական Թուրքիան չի կամենում ընդունել հպատակ ազգերի և պատրիարքարանների արտօնութիւնները, առարկելով թէ ընդհանուր սահմանադրական կարգերի մէջ առանձին արտօնութիւնները և պատրիարքների իբրև ազգապետ-միլէթբաշի-ներկայանալը չի համապատասխանում պետական կառավարութեան պահանջներին: Քանի որ բոլոր ազգերն էլ հաւասար իրաւունքներով Օսմանցիներ են:

Առ այդ, «Մշակը» մէջ է բերում Руч. Вѣд. № 237 Բելօրուստովի թղթակցութիւնը.

«Թիւրք կառավարութիւնը մի շարք փորձեր է անում սեղմել սահմանադրական ազատութիւնների վայելումը և սահմանադրական սկզբունքների խեղաթիւրուած մեկնութիւնով զրկել ազգութիւնները իրանց պատմական կազմակերպութիւնից»

«Կառավարութիւնը հանդէս է բերել մի առաջադրու-
թիւն թէ սահմանադրութեան և հաւասար իրաւունքի
հաստատուելով վերացում են բոլոր հին արտօնութիւն-
ները և նրանց թւում ազգութիւնների իրաւունքը խըմբ-
վելու իրանց հոգևոր պետի շուրջը, որը ունեցել է ոչ
միայն եկեղեցական, այլ և քաղաքացիական իրաւասու-
թիւն և եղել է իր ազգի ներկայացուցիչը Բարձրագոյն
Պրան առաջ:

— «Իւր ցանկանում էք—պատասխանել է տիեզե-
րական պատրիարքը—բաժանել եկեղեցին պետութիւնից
այն չափով, որքան դա վերաբերում է ազգայնական փոք-
րամասնութիւններին, թողնելով թիւրք պետութեան մէջ
կրօնապետական բնաւորութիւնը: Ես այդ բանին համա-
ձայնել չեմ կարող: Սահմանադրական իրաւական երկրում
պէտք է լինի ընդհանուր իրաւունք: Ուստի՝ քանի որ
փատիշահը կը մնայ նաև խալիֆ, ես էլ չեմ գաղարի
համարել ինձ օսմանեան յոյների ներկայացուցիչը, պաշտ-
պանելով նրանց պետական շահերը: Իսկ եթէ կաշխար-
հականանայ և պետութիւնը, այն ժամանակ ես էլ կը
բաւականանամ եկեղեցական իշխանութեան և շահերի
շրջանով:

«Եթէ թուրքիան ոգևորվելով իր սկսած մաքառումով
այդպիսի հակառակորդների դէմ կիւրացնէ այժի միջո-
ցով հանգստացնելու ձևերը, այն ժամանակ սահմանա-
դրութիւնից ոչինչ չի մնայ բացի լոկ անունից: Այն ժա-
մանակ երկրի մէջ կսկսվի քաօս, որի ծաւալը կը լինի մին-
չև այժմ տեսնուածներից ամենամեծը և թիւրքական կայս-
րութեան կործանումը կը լինի մի քանի տարուայ խնդիր:»

«Եւ այդպէս կը շարունակուի, մինչև Արևելքի արթ-
նացած միտքը կը հանի նրան միջնագարեան գաղափար-
ների խորշերից և այն թիւր ու հնացած հասկացողութիւ-
նից, թէ պետութիւնը կարող է հիմնուած լինել մէկի
տիրապետութեան և միւսների հպատակութեան վրայ:»